

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ ԵՒ ԹՈՒՐ-
ՔԵՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԸ

Անդիժան, 20 յուլիսի

Թուրքեստանի հայութիւնը կատա-
րելապէս հանդիսատեսի դերի մէջ է
այն ամեն ընդհանրական խնդիրնե-
րում, որոնք յուզում են ամեն մի
գիտակից հայի, մտքերի և զգացմունք-
ների փոթորիկ առաջ բերելով:

Մեղչանական կեանքը և երկրիս
կտրւած լինելը մտաւոր կենդրոննե-
րից՝ տարիների ընթացքում ստեղծել
են մի այնպիսի մթնոլորտ, զգաց-
մունքերի այնպիսի քարացում, որի

մէջ մարդ կորցնում է ամեն մի գիտակցութիւն:

Եթէ այսօր Թուրքեստանի 20,000 հոգուց բաղկացած հայութիւնը միանգամայն անսիրտ է վերաբերում դէպի մի այնպիսի համադգային տօն, ինչպիսին է տառերի գիւտի 1500 և տպագրութեան 400 ամեակը, և չնայած մամուլի առաջ բերած հետաքրքրութեան, ոչ մի կենդանութեան նշոյլ չի ցոյց տալիս, այդ արդէն նըշան է, թէ որքան նիւթական շահերը կարող են մարդկանց քարացնել, միանգամայն մոռացնել տալով հասարակական պարտականութեան ամենատարրական զգացմունքն անգամ: Թուրքեստանի հայութիւնը որպէս հայկական աշխարհից կտրւած մի հատւած, պարտաւոր է ամենից շատ այսպիսի մի տօնի հանդէպ արտայայտել իր երախտագիտական զգացմունքները այն անմոռաց գործիչների յիշատակին, որոնք տպագրական խօսքը, իրենց անսկուն եռանդով կատարելագործելով, դարձրել են ընդհանրութեան սեփականութիւն և որից այսօր գաղութների և դրանց թւում Թուրքեստանի հայերը աւելի քաղցրութեամբ են օգտւում, քան ուրիշները, որոնք արում են բուն հայրենիքում:

Տողերիս զրոյրը ամիսներ առաջ Թուրքեստանի սակաւաթիւ մտաւորա-

կանների ուշադրութեանն էր յանձնել այսպիսի մի նշանակալից տօնի կատարման խնդիրը և առաջարկել կազմելու Թուրքեստանեան մի յօշիւեանական յանձնաժողով, որը բարոյական կապ հաստատելով Թիֆլիզի յանձնաժողովի հետ, իր ինքնուրոյն, նախօրօք մշակւած ծրագրով հանդէս գարտոն տալու Թիւրքեստանում ցրւած հայ գաղութներին:

Հայութեան համար ստեղծւած այս սև ու մութ օրերը չեն կարող յետ կասեցնել մեզ կուլտուրական աշխատանքներից, քանի որ այսպիսի թըշուառ դրութիւնը ըստ երևոյթին մեր մշտական ճակատագիրն է կազմում: Մեր կուլտուրական աշխատանքները իրենց ուժեղ թափով պէտք է առաջ ընթանան, առանց ոչ մի բանի նայելու:

«Լաւ է ուշ, քան երբէք»: Գէթ այսօրւանից անյնենք գործի, կազմենք երեկոյթ-ցերեկոյթներ, դասախօսութիւններ, ներկայացումներ և հնարաւորութեան չափ նիւթապէս էլ օգնենք այն տաճարի կառուցման գործին, որով մեր նոր սերունդները պէտք է հոգեպէս վերածնւին ու դառնան ազգի և մարդկութեան պիտանի անդամներ:

Ս. Բոունեցի